



ԵԱՏՄ-Ն ՄՈՏԵՑՆՈՒՄ Է ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ
11.11.2016



Ս.թ. նոյեմբերի 11-ին Մոսկվայում կայացավ Եվրասիական տնտեսական ինտեգրացիայի հարցերով ամենամյա արդեն XI միջազգային կոնֆերանսը, որը կազմակերպում է Եվրասիական զարգացման բանկը: Կոնֆերանսի սեկցիաներից մեկում ելույթ ունեցավ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ֆինանսական քաղաքականության

դեպարտամենտի տնօրեն (ոչ վաղ անցյալում Կոնվերսբանկի վարչության նախագահ) Տիգրան Դավթյանը, որը պատմեց հանձնաժողովի կողմից ձեռնարկվող ԵԱՏՄ երկրների ավելի խորը ինտեգրացիային ուղղված միջոցառումների մասին:

Այսպես, շուտով ազգային բորսաների պրոֆեսիոնալ մասնակիցները (բրոքերներ և դիլերներ) իրավունք կստանան առանց լրացուցիչ հավաստագրերի աշխատել ԵԱՏՄ այլ երկրների բորսաներում: Բացի դրանից, պատրաստվում է համաձայնագիր ազգային վարկային բյուրոների միջև տեղեկատվության փոխանակման մասին, քանի որ եթե մի երկրում վարկավորվում է ոչ ռեզիդենտը, անհրաժեշտություն է գոյանում ծանոթանալ նրա վարկային պատմության հետ, որը «գրվում է» այլ երկրում:

Տ. Դավթյանը հիշատակեց այն փաստը, որ Հայաստանի ArCa վճարային համակարգը և Ռուսաստանի «МИР»-ը կնքեցին պայմանագիր ազգային վճարային քարտերի փոխադարձ ճանաչման մասին:

Արտաբժուրային շուկաների ինտեգրացիայի առումով կարելի է հիշատակել Մոսկվայի բորսայի հարթակներում աշխատելու թույլտվությունը ԵԱՏՄ այլ

երկրների որոշ բանկերի, այդ թվում մեկ հայկական բանկի, համար: Դեռևս խոսքը գնում է հիմնականում կոնվերսիոն գործարքների մասին:

Ինչպես նկատեց Տ. Դավթյանը, հետագայում հնարավոր է համաձայնության հասնել նաև բանկերի հավաստագրերի փոխադարձ ճանաչման վերաբերյալ, ինչպես դա կատարվեց բրոքերների և դիլլերների դեպքում: Մասնագետի խոսքով, ԵԱՏՄ տարածքում միասնական ֆինանսական շուկայի ձևավորման համար անհրաժեշտ է մշակել հայեցակարգ և ճանապարհային քարտեզ, որոնք պատրաստ կլինեն հավանաբար 2017թ-ի գարնանը: Նախատեսվում է նաև 2025թ-ին ֆինանսական շուկաների բնագավառում ստեղծել վերազգային կարգավորող մարմին: «Կապրենք կտեսնենք», - եզրակացրեց Տիգրան Դավթյանը:

XI միջազգային կոնֆերանսի շրջանակներում կայացավ ևս մեկ իրադարձություն. Եվրասիական զարգացման բանկի կողմից նախապես հայտարարված մեդիա ոլորտում միջազգային մրցույթի հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը: Հայաստանի բանկերի միությունը ուրախությամբ հայտնում և շնորհավորում է իր աշխատակից Աշոտ Արամյանին մրցույթում հաղթելու կապակցությամբ:



ՀՀ-Ն՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՐԹՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՌԱՋՏԱՐ
02.12.2016



Հայաստանը տարածաշրջանային հաղթող է ճանաչվել «Երեխաների և երիտասարդների ֆինանսների միջազգային կազմակերպության» (Child & Youth Finance International) «Գլոբալ ներգրավվածություն» (Global inclusion) մրցանակաբաշխությունում:

Ինչպես հաղորդում է abcfinance.am կայքը, Եվեդիայում նոյեմբերի 28-ին կայացած իրադարձությանը մասնակցել են նոմինացված 45 երկրների 150 ներկայացուցիչներ, որոնց շարքում Հայաստանը՝ ի դեմս Կենտրոնական բանկի, գրավել է առաջին տեղը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում:

«Մրցանակաբաշխության հիմնական նպատակն է ընդգծել բոլոր այն երկրների և կառույցների կարևորությունը, որոնք մեծ ներդրում են ունեցել ֆինանսական կրթվածության և ներգրավվածության մակարդակի բարձրացման հարցում: Հայաստանը 2016-ին առանձնացել է ֆինանսական, սոցիալական և կյանքի որակի բարելավմանն ուղղված նորարար ծրագրերի իրականացմամբ», - ասված է հաղորդագրությունում:

Մրցանակը տրամադրվել է ԿԲ-ի Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնին՝ ֆինանսական կրթման ազգային ռազմավարության ներդրման և արդյունավետ կիրառման, ինչպես նաև «Իմ ֆինանսների ամիս» ծրագրի արդյունքում ֆինանսական կրթվածության քանակական և որակական ցուցանիշների աճի համար:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

04.10.2016

ConverseBank

Կոնվերս Բանկը վերսկսել է ուսանողական վարկերի տրամադրումը բարելավված պայմաններով՝ առաջարկելով «Իմ ապագան» և «Էքսպրես» վարկատեսակները:

«Իմ ապագան»-ն հայաստանյան շուկայում եզակի վարկատեսակ է, որը հնարավորություն է ընձեռում պլանավորել ուսման ընթացքը և վարկավորում ստանալ միանգամից ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար», - ասված է բանկի տարածած հաղորդագրությունում:

Վարկը տրամադրվում է առավելագույնը 4 մլն դրամի չափով և 4 տարի ժամկետով, իսկ գումարը փոխանցվում է համապատասխան ուսումնական հաստատության հաշվին՝ կիսամյակային կտրվածքով:

Միաժամանակ բանկում նշել են, որ «Էքսպրես» վարկը սպասարկման համեմատաբար ցածր վճարի, ինչպես նաև խրախուսման այլ եղանակների կիրառման շնորհիվ, Հայաստանում ամենամատչելի ուսանողական վարկերից է: Այն տրամադրվում է առավելագույնը 1 մլն դրամի չափով և 18 ամիս ժամկետով՝ 17-19% տարեկան դրույքաչափով:

Բացի այդ, Կոնվերս Բանկը շարունակում է վարկավորում իրականացնել գործող պետական ուսանողական վարկային ծրագրի շրջանակում: Բանկում տեղեկացրել են, որ ուսանողական և էքսպրես վարկերից օգտվողներին անվճար տրամադրվում է VISA ISIC համատեղ դեբետային քարտ՝ սպասարկման 24 ամիս արտոնյալ ժամկետով:



ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է CASHBACK ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

07.10.2016



ՎՏԲ-Հայաստան Բանկը քարտերով անկանխիկ վճարումների աճի խթանման նպատակով գործարկել է cashback ծառայությունը:

Ինչպես նշել են բանկում, հոկտեմբերից սկսած՝ ՎՏԲ-Հայաստան Բանկի բոլոր MasterCard և VISA քարտապանները ստանում են cashback պարգևատրումներ «Cashback N1» առևտրային ցանցի՝ ՀՀ տարածքում գործող շուրջ 300 առևտրային և սպասարկման կետերում անկանխիկ գործարքների դիմաց:

«Այս ծառայության շնորհիվ ամենօրյա գնումներն ու ծառայությունների դիմաց վճարումները ՎՏԲ-Հայաստան Բանկի քարտերով կլինեն ոչ միայն արագ և հարմարավետ, այլև շահավետ», - ասված է հաղորդագրությունում:

Բանկում տեղեկացրել են, որ cashback պարգևատրումները տրամադրվում են ծախսված գումարի 15,9%-ի չափով և կհաշվեգրվեն հաճախորդի քարտային հաշվին մինչև յուրաքանչյուր ամսվա 15-րդ օրը՝ նախորդ ամսվա ընթացքում կատարված անկանխիկ գործարքների համար:



ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է ՎՃԱՐԱՅԻՆ ՆՈՐ ՊՈՐՏԱԼ

17.10.2016

Կոնվերս Բանկը գործարկել է վճարային նոր պորտալ, որը հնարավորություն է տալիս միասնական ինտերնետային հարթակի օգնությամբ կատարել տարբեր տիպի վճարումներ:



Ինչպես նշել են բանկում, պորտալով վճարումներ կարող են իրականացնել ոչ միայն բանկի հաճախորդները, այլև «Արմենիան Քարդ» պրոցեսինգային ընկերության անդամ բանկերի թողարկած ArCa, VISA և MasterCard քարտերի քարտապանները:

«Այցելելով Կոնվերս բանկի նոր պորտալը (որը հասանելի է նաև բանկի պաշտոնական կայքից)՝ քարտապանները կկարողանան վճարումներ իրականացնել իրենց հարմար պահին և վայրից՝ վճարելով կոմունալ, կապի և հեռահաղորդակցության ոլորտի օպերատորների (Ucom, Beeline, ՎիվաՍել-ՄՏՄ, «Ռոստելեկոմ») մատուցած ծառայությունների, ավտոմեքենաների կայանման դիմաց, ինչպես նաև մարել կայանման տուգանքները», - ասված է հաղորդագրությունում:



[ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿԸ FMO-ԻՑ \\$15 ՄԼՆ ՎԱՐԿ Է ՆԵՐԳՐԱՎԵԼ](#)
18.10.2016



Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը Նիդեռլանդների զարգացման ֆինանսական ընկերությունից (FMO) \$15 մլն վարկ է ներգրավել: Վարկային համաձայնագիրը կնքվել է Նիդեռլանդների Նորդվեյք քաղաքում՝ FMO-ի կազմակերպած «Ֆինանսների ապագան» կոնֆերանսի շրջանակում:

Ինչպես հայտնել են բանկում, այս ֆինանսավորումն ուղղվելու է Հայաստանում գործող փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև գյուղատնտեսության հատվածի զարգացմանը: «Նշված վարկային ռեսուրսը բազմարժույթային է, որը ենթադրում է, որ ներգրավվող ռեսուրսը կամ նրա մի մասը կարող է լինել ինչպես դոլարով, այնպես էլ դրամով: Սա բանկի և FMO-ի միջև առաջին ուղիղ համագործակցության համաձայնագիրն է», - ասված է հաղորդագրությունում:

FMO-ն հոլանդական զարգացման բանկն է, որը 46 տարի շարունակ ներդրումներ է իրականացնում զարգացող երկրների տնտեսություններում: Շուրջ 85 երկրում €8,9 մլրդ-ի ներդրումներ իրականացրած FMO բանկն

աշխարհում մասնավոր հատվածի զարգացմանը խթանող խոշորագույն կազմակերպություններից մեկն է:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ Է «ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ» ՓԱԹԵԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

20.10.2016



ՎՏԲ-Հայաստան Բանկն առաջարկում է «Գործի մարդիկ» արտոնյալ սպասարկման համալիր ծրագիրը:

Բանկում նշել են, որ ծրագիրը նախատեսված է հետևյալ խոշոր հատվածների կազմակերպությունների աշխատակիցների համար՝ հաշվի առնելով նրանց գործունեության առանձնահատկությունները՝

- ՏՏ ընկերություններ, հեռահաղորդակցության օպերատորներ,
- Պետական ուժային կառույցներ (բացի զորամասերից), նախարարություններ, պետական այլ հաստատությունները,
- Կրթության ոլորտ՝ դպրոցներ, բուհեր, ուսումնարաններ, քոլեջներ,
- Առողջապահության ոլորտ՝ հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, բժշկական հիմնարկներ, ատամնաբուժարաններ:

«Գործի մարդիկ» ծրագիրը հնարավորություն է ընձեռում փաթեթի սեփականատերերին ստանալու՝

- Անվճար աշխատավարձային քարտ,
- Սպառողական վարկեր/օվերդրաֆտեր/վարկային քարտեր՝ Բանկի ստանդարտ տոկոսադրույքից մինչև -7% արտոնությունով,
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ արտոնյալ պայմաններով,
- Անվճար միացում SMS Բանկինգ և Ինտերնետ Բանկինգ ծառայություններին,
- Մինչև 3 % շահութաբերություն քարտերի դրական մնացորդի վրա:

**«ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ»-Ի ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ՎՏԲ-
ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿՈՒՄ**

21.10.2016



«Եվրոպական իրավաբանական ծառայություն» ընկերությունը Հայաստանի շուկայում գործարկել է «Անձնական իրավաբան» ծառայության հավաստագրերի վաճառքը, որի դիմաց վճարումներն իրականացվում են ՎՏԲ-Հայաստան Բանկի միջոցով:

Ինչպես տեղեկացրել են բանկում, «Անձնական իրավաբան» ծառայությունը համալիր իրավաբանական ծառայությունների մատուցման հավաստագիր է, որը նախատեսված է ցանկացած քաղաքացու համար:

«Եվրոպական իրավաբանական ծառայություն»-ը հնարավորություն է ընձեռում ձեռք բերել իրավաբանական ծառայություններ ստանալու հավաստագրեր ՀՀ ամբողջ տարածքում և վճարել ծառայությունների դիմաց ՎՏԲ-Հայաստան Բանկի բոլոր մասնաճյուղերի միջոցով՝ համաձայն ընտրված փաթեթի: Ձեռք բերված հավաստագրերը վավեր են 1 տարվա ընթացքում», - նշել են բանկում:

Դառնալով «Եվրոպական իրավաբանական ծառայության» հաճախորդ՝ քաղաքացին ազատվում է կոնկրետ մասնագիտացման իրավաբան գտնելու անհրաժեշտությունից, ընդունելությունների հերթագվելու և իրավաբանի ժամանակացույցի հետ հարմարվելու անհրաժեշտությունից:



ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԸ ՀԱՄԱԼՐԵԼ Է ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

21.10.2016



Հայբիզնեսբանկի խորհրդի որոշմամբ՝ բանկի հետագա զարգացումը ապահովելու նպատակով բանկի բաժնետեր Վիտալի Գրիգորյանը համարել է կանոնադրական կապիտալը 8 467 060 000 դրամով:

Բանկում նշել են, որ համարված կանոնադրական կապիտալի առկայությամբ

բանկը կշարունակի հաստատուն քայլերով իրագործել իր հեռանկարային զարգացմանն ուղղված ծրագրերը, ինչի արդյունքում կընդլայնվեն արագ զարգացման ու կատարելագործման հնարավորությունները:

«Կանոնադրական կապիտալի համալրման գործընթացին զուգահեռ՝ Հայբիզնեսբանկը, լինելով շուկայի առաջատարներից մեկը, ակտիվորեն աշխատանքներ է տարել միջազգային հարաբերությունների գծով ամուր հիմքեր ստեղծելու, կորպորատիվ կառավարումը զարգացնելու և առաջարկվող ծառայությունների որակն ու պայմանները բարելավելու ուղղությամբ: Ավելին, բանկը շարունակում է ընդլայնել 50-ից ավելի տարածքային ստորաբաժանումներից կազմված մասնաճյուղային ցանցը՝ նպատակ դնելով Հայաստանի բոլոր մարզերում առնվազն մեկ մասնաճյուղ ունենալ», - ասված է հաղորդագրությունում:

Բանկում ընդգծել են, որ ֆինանսական գործունեությունից բացի, բանկը շարունակում է կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում իրականացնել մի շարք ծրագրեր:



ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՏՈՆՈՒՄ Է ԻՐ 15-ԱՄՅԱԿԸ

24.10.2016



Այս տարի Յունիբանկը տոնում է իր հիմնադրման 15-ամյակը:

«Յունիբանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև որակյալ

ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը: 15 տարվա կայուն և հաջող աշխատանքի արդյունքում «Յունիբանկը» կարողացավ արժանանալ հաճախորդների վստահությանը և ձեռքբերել բարձր հեղինակություն և գործարար համբավ», - ասված է հաղորդագրությունում:

Բանկում նշել են, որ այսօր Յունիբանկի ծառայություններից օգտվում է ավելի

քան 320 հազ. հաճախորդ, իսկ 4 հազ. փոքր և միջին ձեռնարկություններ ընտրել են բանկը՝ որպես ֆինանսական գործընկեր: Բանկին վստահել են ավելի քան 24 հազ. ավանդ:

Յունիբանկի կապիտալի աճով պայմանավորված՝ Moody's Investors Service միջազգային գործակալությունը 2016թ. օգոստոսին բարելավել էր Յունիբանկի վարկանիշի կանխատեսումը՝ դարձնելով այն «պոզիտիվ»: Տարվա սկզբից բանկն ապահովել է 622 մլն ՀՀ դրամի շահույթ:

Բանկում ընդգծել են, որ Յունիբանկն առաջին բանկն է Հայաստանում, որ 2015թ. նախնական հրապարակային առաջարկի միջոցով իրականացրել է բաժնետոմսերի տեղաբաշխում «ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ում:

Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում է 46 մասնաճյուղ և ներկայացուցչություն Մոսկվայում, 113 բանկոմատ, 163 վճարային տերմինալ և ավելի քան 50 պրոմո կետ:

ՆԵՐԴՐՎԵԼ Է INECOONE ԱՆՁՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

24.10.2016



Ինեկոբանկն օրերս ներկայացրել է InecoOne համակարգը, որը ներառում է անձնական

ֆինանսների կառավարման հիմնական գործիքակազմը: Մասնավորապես, համակարգում ընդգրկված են ընթացիկ հաշիվներ՝ 3-4 հիմնական արժույթներով, խնայողական հաշիվներ՝ Inecosave պրոդուկտը, միջազգային կրեդիտ քարտ, օնլայն և մոբայլ բանկային լուծումներ:

«Անձնական ֆինանսների կառավարման համար մարդուն անհրաժեշտ են հիմնական բանկային գործիքները՝ միանգամից և միաժամանակ: Դա է պատճառը, որ խմբավորել ենք այս ծառայությունները մեկ համակարգի ներքո», - նշել է Ինեկոբանկի Բրենդի զարգացման ծառայության ղեկավար Լևոն Ռուբինյանը:

«InecoOne-ը ապահովում է մարդու՝ սեփական ֆինանսների նկատմամբ հասանելիությունը: Եթե բանկում եղած գումարն ավելի քիչ հասանելի է, քան

գրպանում, ուրեմն բանկը, ի սկզբանե, պարտված է: Մեր այս պրոդուկտի շնորհիվ հաճախորդի միջոցները հասանելի են 24/7 ռեժիմով՝ ցանկացած վայրում և առանց կորուստների», - ընդգծել է Լևոն Ռուբինյանը:

Բացի այդ, Ինեկոբանկը գործարկել է InecoExpress տերմինալները, որոնք հնարավորություն են տալիս 24/7 ռեժիմով գումար մուտքագրել հաշվին:

«InecoOne պրոդուկտը չունի խճճված պայմաններ, սպասարկման վճարներ առանձին ծառայությունների դիմաց, կանխիկացման և կանխիկի մուտքագրման վճարներ: Ընդհանուր փաթեթի համար գործում է պարզ՝ ամսական 500 դրամ սակագինը: Փաթեթից բխող մյուս ծառայությունները, այդ թվում՝ տեղեկանքի ստացում, քաղվածք և այլն, տրամադրվում են անվճար», - տեղեկացրել է բանկի ներկայացուցիչը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է SME.ACBA.AM ԿԱՅՔԸ

26.10.2016



Ակրա-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը ներկայացրել է sme.acba.am կայքը, որը կոչված է օնլայն տիրույթում բիզնեսի կառավարմանն ու զարգացմանն ուղղված անվճար հարթակ դառնալ՝ հասանելի լինելով բոլորի համար:

Բանկում նշել են, որ sme.acba.am-ի ստեղծումը հնարավոր է դարձել Համաշխարհային բանկի խմբի

անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) հետ համագործակցության արդյունքում:

«Առցանց հարթակի միջոցով սկսնակ և գործող գործարարները կարող են ներբեռնել ուսուցողական նյութեր և տեսահոլովակներ, օգտվել մի շարք բիզնես-գործիքներից և տարատեսակ ֆինանսական հաշվիչներից: Այն նաև նախատեսված է դառնալ համագործակցության յուրահատուկ հարթակ փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար՝ փոխշահավետ համագործակցության լայն հնարավորություններ բացելով նրանց առաջ», - ասված է հաղորդագրությունում:

«Մենք միշտ եղել ենք սոցիալապես պատասխատու բանկ: Այս է պատճառը, որ ցանկանում ենք անընդհատ զարգացող հաճախորդ-գործընկերներն ունենալ, ու հենց այս մղումն է, որ թույլ տվեց մեզ շուրջ երեք տարիների համառ աշխատանքից հետո ունենալ նման արդյունք: Հետագայում նախատեսում ենք ընդլայնել առցանց հարթակի գործունեության տիրույթը՝ նաև ներառելով գյուղատնտեսության ոլորտը», - ասել է Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյանը:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿԻ ՆՈՐ ԳԼԽԱՄԱՍԸ

27.10.2016



Երևանում բացվել է Մելլաթ Բանկի նոր գլխամասային գրասենյակը, որը կգործի Թումանյան 5ա հասցեում:

«Բանկի նոր գլխամասը գտնվում է Երևանի ամենակենտրոնում, և մենք հուսով ենք, որ նորաձ դիզայնով և հարմարավետ պայմաններով հագեցած այս գրասենյակը կգոհացնի մեր հաճախորդներին և

բարենպաստ պայմաններ կստեղծի մեր աշխատակիցների համար», - նշել է Մելլաթ Բանկի գործադիր տնօրեն Մեյեդ Դոլամրեզա Մուսավին:

Նրա խոսքով՝ վերջին շրջանում Իրանի տնտեսության ակտիվացումն ու դեպի Հայաստան իրանցի զբոսաշրջիկների ավելացումը նպաստել է բանկի հաճախորդների թվի աճին:

Նա տեղեկացրել է, որ Մելլաթ Բանկը մտադիր է ընդլայնել իր գործունեությունը Հայաստանում՝ բացելով նոր մասնաճյուղեր:

Մեյեդ Դոլամրեզա Մուսավին հայտարարել է, որ մոտ մեկ ամիս առաջ իրականացվել է բանկի կապիտալի համալրում, որի արդյունքում Մելլաթ Բանկի կանոնադրական կապիտալը հասել է 32,1 մլրդ դրամի, իսկ նորմատիվային կապիտալը՝ 31 մլրդ դրամի:

Բանկի խորհրդի նախագահ Մոհամմադ Բիգդելին էլ նշել է, որ լինելով Իրանի խոշորագույն բանկերից մեկը՝ Մելլաթ Բանկն իրանական պատժամիջոցների վերացումի հետո որոշել է ընդլայնել իր գործունեությունը տարածաշրջանում՝ դիտարկելով նաև գրասենյակի բացումը Վրաստանում, որը կաշխատի Երևանյան գրասենյակի անմիջական հովանավորության ներքո:

**ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ՄԻԱՅԵԼ Է «ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ԴՊՐՈՑ»
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆԸ**

28.10.2016

ConverseBank

Կոնվերս Բանկը միացել է «Մայքրոսոֆթ»-ի հայաստանյան գրասենյակի «Թվային դարաշրջանի դպրոց» նախաձեռնությանը:

Ինչպես նշել են բանկում, ծրագրի շրջանակում նախատեսվում է Երևանի թիվ 76 հիմնական «Հայ-արգենտինական» դպրոցի 5-6-րդ դասարանցիներին Window 10 օպերացիոն համակարգով հայկական պլանշետների տրամադրում, նոր տեխնոլոգիաներով կրթության իրականացում:

Ծրագրին, որպես կողմ, մասնակցում է «ԱրմԹաբ» պլանշետներն արտադրող «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ընկերությունը, աջակցում՝ Հայաստանում Արգենտինայի դեսպանատունը:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ ՊԱՐԶԵՑՐԵԼ Է ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

25.11.2016

Ամերիաբանկը պարզեցրել է վարկերի տրամադրման գործընթացը՝ հնարավորություն տալով հաճախորդին մեկ պայմանագրի կնքմամբ օգտվել բանկի տարբեր ծառայություններից:

Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասել է Ամերիաբանկի մանրածախ գործառնությունների գծով տնօրեն Արման Բարսեղյանը:



Նրա խոսքով՝ եթե նախկինում հաճախորդները ստիպված էին յուրաքանչյուր վարկի համար կնքել առանձին պայմանագիր, ապա այժմ հնարավորություն կստանան կնքել մեկ հիմնական փաստաթուղթ: Արդյունքում կհաստատվի ֆինանսական սահմանաչափ, որի շրջանակում հաճախորդը 1 տարվա ընթացքում կկարողանա օգտվել բանկի պրոդուկտներից՝ առանց լրացուցիչ վարկունակության գնահատման:

Մասնավորապես, ընկերությունների համար սահմանված հատուկ չափանիշների համապատասխանելու դեպքում ընկերությունները հնարավորություն կունենան ստանալ վարկեր՝ 2%-ով ցածր տոկոսադրույքով և մինչև 1 մլրդ դրամ ծավալով, իսկ գույքի գնահատման և նոտարական վավերացման ծախսերը կկրի բանկը:

Ամերիաբանկը մի շարք ոլորտների, այդ թվում՝ ՏՏ և հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության և էներգետիկայի, առողջապահության պետական և մասնավոր հատվածի ընկերությունների աշխատակիցների համար առաջարկում է վարկային պրոդուկտներ արտոնյալ պայմաններով և տրամադրման պարզեցված գործընթացով:

Վարկերի վերաֆինանսավորման արշավի ժամկետը բանկը երկարաձգել է մինչև 2017թ. հունվարի 31-ը՝ միաժամանակ բարելավվելով դրա պայմանները:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «ՊՐՈՊԱՐԿՈ»-ԻՑ \$20 ՄԼՆ ՎԱՐԿ Է ՍՍԱՑԵԼ 29.11.2016

Ամերիաբանկը Ֆրանսիական զարգացման գործակալության դուստր «Պրոպարկո» ընկերությունից \$20 մլն վարկ է ներգրավել, որը կուղղվի Հայաստանում էներգաարդյունավետության, վերականգնվող էներգետիկայի, գյուղատնտեսության, սննդի վերամշակման, կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորմանը:

Համապատասխան պայմանագիրը ստորագրվել է այսօր Երևանում՝ Ամերիաբանկի գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի և «Պրոպարկո»

ընկերության ֆինանսական հաստատությունների գծով ղեկավար Գիյոմ Բարբրուսի միջև:



«Ամերիաբանկի հետ մեր համագործակցությունը սկսվել է 2013թ., երբ ստորագրեցինք վարկային պայմանագիր՝ հիմնականում թիրախավորելով գյուղմթերքների արտադրության և վերամշակման ոլորտները: Նպատակ ունենք ավելի խորացնել նախորդ ծրագիրը և, շարունակելով աջակցել ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկի՝

գյուղատնտեսության զարգացմանը, այս անգամ ներառել նաև էներգետիկայի և սոցիալական ուղղվածության ծրագրերի ֆինանսավորումը», - նշել է Գիյոմ Բարբրուսը:

Արտակ Հանեյանն էլ, կարևորելով բանկի և «Պրոպարկո»-ի միջև համագործակցությունը, հույս է հայտնել, որ նոր վարկի ներգրավումը հնարավորություն կտա ընդլայնել հարաբերությունների շրջանակները՝ ծառայելով բանկի հաճախորդների շահերին:

«Այս պայմանագրի ստորագրումը ևս մեկ քայլ է՝ մեր տնտեսության հետագա զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով ներգրավելու երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով ֆինանսական միջոցներ», - ընդգծել է նա:

Անդրադառնալով Banks.am-ի հարցին, թե արդյոք գյուղոլորտում ապահովագրության բացակայությունը չի խոչընդոտում ոլորտի վարկավորման ընդլայնմանը, Արտակ Հանեյանը նշել է, որ իրենք հիմնականում աշխատում են վերամշակող ձեռնարկությունների և ավելի քիչ՝ ֆերմերային մանր տնտեսությունների հետ, ինչը բանկին թույլ է տալիս գերծ մնալ բերքի հետ կապված անմիջական ռիսկերից:

«Ենթակառուցվածքների հետ կապված՝ դեռևս հնարավորություն չունենք ավելի ընդլայնելու և մանր գյուղվարկեր տրամադրելու: Մենք ավելի շատ շեշտը դնում ենք գյուղմթերք արտադրող և վերամշակող ձեռնարկությունների վրա», - պարզաբանել է Արտակ Հանեյանը:



ՅՈՒՆԻԲԱՆԿԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼ Է 3,3 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ

30.11.2016



Յունիբանկը շարունակում է բաժնետոմսերի տեղաբաշխման գործընթացը և արդեն իրացրել է ծավալի ավելի քան 80%-ը, որը կազմում է 3,3 մլրդ դրամ:

Բանկում նշել են, որ մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 100 դրամ, տեղաբաշխման գինը՝ 230 դրամ:

Բաժնետոմսերի նվազագույն փաթեթը, որը կարելի է ձեռք բերել, կազմում է 1 մլն դրամ: Տեղաբաշխումն իրականացվում է «ՆԱՄԴԱՔ ՕԷՍԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում և ավարտվելու է 2016թ. դեկտեմբերի 1-ին:

Ներգրավված միջոցներն ուղղվելու են բանկի կապիտալի համալրմանը, ՓՄՁ-ների և սպառողական վարկավորման ծավալների ընդլայնմանն ու հաճախորդների համար պայմանների բարելավմանը:

Յունիբանկում հիշեցրել են, որ բանկը թողարկում է նաև ՀՀ դրամով պարտատոմսեր՝ 13.5% տարեկան եկամտաբերությամբ:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել Յունիբանկի գլխամասային գրասենյակում կամ 46 մասնաճյուղերում: Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է մինչև 2017թ. փետրվարի 7-ը:

ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿԸ ԱՌԱՆՑ ԳՐԱՎԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐ ԿՏՐԱՄԱՂԻ

30.11.2016



PROMETHEY BANK

Պրոմեթեյ Բանկը ներկայացրել է վարկավորման նոր առաջարկ՝ առանց գրավի սպառողական վարկեր:

Ինչպես նշել են բանկում, միկրո վարկերը տրամադրվում են մինչև 24 ամիս ամրման ժամկետով և 24% տարեկան տոկոսադրույքով: Վարկի նվազագույն

գումարը 100 հազ. դրամ է, իսկ առավելագույնը՝ 250 հազ. դրամ:

Վարկը կարելի է ստանալ բանկի ցանկացած գրասենյակում՝ ներկայացնելով միայն նույնականացման քարտ կամ անձնագիր և սոցիալական քարտ (կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանք):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միությունն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ uba@uba.am: